ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները՝ ի դեմս իրենց Կառավարությունների (այսուհետ՝ Կողմեր),

հաշվի առնելով Համագործակցության մասնակից պետություններում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ իրենց բնակչության ավանդական հետաքրքրությունը,

ելնելով Կողմերի տարածքներում թողարկվող պարբերական տպագիր արտադրանքի լայն ու ազատ փոխանակման եւ տարածման համար պայմանների ստեղծման անհրաժեշտությունից,

հաստատելով իրենց հավատարմությունը տեղեկության փոխանակման համընդհանուր սկզբունքներին, Կողմերի տարածքներում արտադրվող տպագիր արտադրանքի նկատմամբ իրենց քաղաքացիների իրավահավասար եւ ազատ օգտվելու հնարավորությանը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան,

հաշվի առնելով Համագործակցության Կառավարությունների ղեկավարների Խորհրդի 1996 թվականի հոկտեմբերի 18-ի՝ Որոշմամբ հաստատված "Անկախ Պետությունների Համագործակցության տեղեկատվական տարածքի ձեւավորման" Հայեցակարգի դրույթները, նկատի ունենալով 1992 թվականի հոկտեմբերի 9-ի "Տեղեկատվության բնագավառում համագործակցության մասին" Համաձայնագիրը եւ 1995 թվականի փետրվարի 10-ի "Գրահրատարակչության, գրատարածման եւ պոլիգրաֆիայի բնագավառում համագործակցության մասին" Համաձայնագիրը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը զարգացնում են համագործակցություն պարբերական մամուլի փոխանակման եւ տարածման բնագավառում իրենց քաղաքացիների՝ պարբերական հրատարակությունների կարիքների բավարարման եւ Կողմերի միջեւ ավանդական կապերի հետագա ամրապնդման նպատակով:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը, ազգային օրենսդրությանը եւ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան, իրենց քաղաքացիների համար երաշխավորում են սույն Համաձայնագրի մասնակից պետություններում հրապարակվող տպագիր արտադրանքն օգտագործելու ազատ եւ իրավահավասար հնարավորություն:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը փոխանակում եւ երկկողմ ու բազմակողմ համաձայնագրերի հիման վրա տարածում են սույն Համաձայնագրի մասնակից պետություններում հրատարակվող պարբերական տպագիր արտադրանքը, աջակցում են քաղաքական, տնտեսական, մշակութային եւ գիտական կյանքի վերաբերյալ, ինչպես նաեւ սույն Համաձայնագրի մասնակից

պետությունների ժողովուրդների լեզուներով հրատարակվող պարբերական հրատարակությունների գործունեության մասին նյութերի թարգմանությանը եւ փոխադարձաբար հրապարակմանը:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը միջոցներ են ձեռնարկում իրենց գրադարանային ֆոնդերը սույն Համաձայնագրի մասնակից պետություններում հրատարակվող պարբերական տպագիր արտադրանքով համալրելու համար:

ՀՈԴՎԱԾ 5

Յուրաքանչյուր Կողմ, ազգային օրենսդրությանը համապատասխան, ձգտում է բարենպաստ պայմաններ ստեղծել սույն Համաձայնագրի մասնակից պետություններում հրատարակվող պարբերական տպագիր արտադրանքի տարածմամբ զբաղվող կառույցների
գործունեության համար, այդ թվում՝ նրանց հարկային, մաքսային եւ այլ արտոնություններ տրամադրելու միջոցով:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերը միմյանց օժանդակում են պարբերական տպագիր արտադրանքի արտադրությունում տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառման գործում, միջոցներ
են ձեռնարկում արտադրությունում տեխնիկական լուծումների միասնականացման, պարբերական տպագիր արտադրանքի արտադրության, փոխանցման եւ տարածման ուղղությամբ՝ հաշվի առնելով միջազգայնորեն ընդունված չափանիշները:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը նպաստում են պարբերական մամուլի բնագավառում համատեղ, այդ թվում՝ պետական մասնակցությամբ, ձեռնարկությունների ստեղծմանը եւ դրանց գործունեությանը, ինչպես նաեւ համագործակցության այլ ձեւերին: Համագործակցության կոնկրետ ձեւերը կկարգավորվեն Կողմերի կամ նրանց տնտեսավարող
սուբյեկտների երկկողմ համաձայնագրերով:

ՀՈԴՎԱԾ 8

Կողմերի իրավասու մարմինները պարբերաբար փոխանակում են տվյալներ եւ տեղեկություններ սույն Համաձայնագրի կատարման ընթացքի մասին:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագրի կիրառման եւ մեկնաբանման հետ կապված վեճերը շահագրգիռ Կողմերի միջեւ լուծվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագիրը բաց է Համաձայնագրի նպատակներն ու սկզբունքներն

ընդունող Անկախ Պետությունների Համագործակցության ցանկացած մասնակից պետության
կողմից միանալու համար:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագրում Կողմերի ընդհանուր համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ:

ՀՈԴՎԱԾ 12

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց առնվազն 6 ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցելով ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագիրը գործում է ուժի մեջ մտնելուց հետո 5 տարվա ընթացքում: Գործողության ժամկետը լրանալուց հետո սույն Համաձայնագիրն ինքնաբերաբար կերկարաձգվի՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով, եթե Կողմերն այլ որոշում չեն ընդունում:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի բոլոր անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցագիրը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:
Անհրաժեշտ ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար Համաձայնագիրն
ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերը ավանդապահին հանձնելու օրվանից:

Կատարված է Մինսկ քաղաքում 1999 թվականի հունիսի 4-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2001 թվականի մայիսի 15-ից: